ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121

ք.Երևան *«29» նոյեմբեր 2019թ.*

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Վ. Պողոսյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապատարանի կարիքների համար «Ամանոր 2020» Ամանորյա տոներին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***137 868 720 (մեկ հարյուր երեսունյոթ միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև ***137 868 720 (մեկ հարյուր երեսունյոթ միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամը***, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ***Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը:***

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Սասնա Ծռեր փ, 2-198.
Կենտրոնական գանձապետարան	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410537	Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00167818
Է. Կիրակոսյան ----------	Վ. Պողոսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«29» նոյեմբեր 2019թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1.	79951110/657	Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին նվիրված «Ամանոր 2020» մշակութային միջոցառումների շրջանակում անհրաժեշտ է կազմակերպել մայրաքաղաքի գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողությունը, տարեմուտի համերգը, ինչպես նաեւ Սուրբ Ծննդյան մանկական համերգը: Մայրաքաղաքի գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողությունը տեղի կունենա ս/թ. դեկտեմբերի 21-ին Հանրապետության Հրապարակում: Մեկնարկը կտրվի ժամը 20:00-ին՝ Երևանի քաղաքապետի շնորհավորական խոսքով: Միջոցառումը հավուր պատշաճի կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ապահովել շուրջ 20 բոպե տևողությամբ մյուզիքլ: Մյուզիքլի բեմադրման համար անհրաժեշտ է ստեղծել տոնական բովանդակությամբ և հետաքրքիր զարգացմամբ սցենար, որը կփոխանցի օրվա խորհուրդն ու տրամադրությունը: Մյուզիքլում անհրաժեշտ է ապահովել տոնական հայտնի ու ճանաչված թվով 7 արտասահմանյան երգերին նոր գործիքավորում և հատուկ միջոցառման համար ընտրված երգերի հայերեն խոսքերի ստեղծում, ձայնագրում, գործիքավորում, հետարտադրական մշակում: Անհրաժեշտ է ապահովել վերը նշված երգերի հայերեն տեքստերի հեղինակ, ինչպես նաև երաժշտական պրոդյուսեր՝ Գրիգոր Կյոկչյան կամ համարժեք այլ երաժշտական պրոդյուսերի մասնակցությունը /թեկնածությունը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Մյուզիքլի տևողության ժամանակահատվածին համապատասխան անհրաժեշտ է ստեղծել լեդային թեմատիկ բովանդակություն՝ «Ֆրագմենտ ստուդիայի»-ի կամ այլ համարժեք ընկերության հետ համագործակցությամբ: Մյուզիքլի իրադարձությունների տրամաբանական զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է շուրջ 80 արտիստների՝ երգիչներ և պարողներ, մասնակցություն: Բեմականացման մասնակիցներ՝ «Սուեզ», «Սուեքքիդս», «Հայար եւ ներ», «Ամարաս» կամ այլ համարժեք խմբեր /խմբերի թեկնածությունները անհրաժեշտ	Դրամ	137 868 720	1	ք.Երևան	2019թ դեկտեմբերի 20-ից մինչև 2020թ-ի հունվարի 5-ը ներառյալ

		է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Ապահովել միջոցառման ռճաբան, հատուկ միջոցառման համար շուրջ 50 կտոր կերպարային հագուստի ստեղծում՝ տարբեր կտորների գունային եւ տեքստիլային համադրությամբ՝ մետաքս, բուրդ, վուշ, դրապ, նեոպրին և այլն: Մյուզիքլի ընթացքում անհրաժեշտ է ապահովել շուրջ 1.5ր տևողությամբ տեսանյութի նկարահանում, մոնտաժային աշխատանքների իրականացում՝ «Ֆրագմենտ ստուդիա»-ի կամ այլ համարժեք ընկերության հետ համագործակցությամբ: Միջոցառման երկրորդ հատվածում անհրաժեշտ է կազմակերպել համերգային ծրագիր՝ հայ սիրված եւ ճանաչված 6 արտիստների մասնակցությամբ, որոնք կկատարեն 3-ական երգ: Արտիստների անունները և երգացանկը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Միջոցառման հանրահռչակման և իրազեկման նպատակով անհրաժեշտ է ապահովել գովազդային բաներների տպագրություն՝ թվով 39 բիլբորդ՝ յուրաքանչյուրը 18 ք.մ. ծավալով, ինչպես նաև 30 սքրոլլեր՝յուրաքանչյուրը 4.32 ք.մ. ծավալով: Անհրաժեշտ է ապահովել նաեւ միջոցառման ցուցանակների, անձնակազմի անցագրերի, ինչպես նաև այլ տպագրական ծառայություն: Արտիստների և մյուզիքլի մասնակիցների համար անհրաժեշտ է ապահովել ետնաբեմ՝ թվով 3 լուսավորվող, ջեռուցվող, արդուկի հնարավորությամբ, վրանների վարձակալությամբ, ինչպես նաև գրիմ վագենիներ գրավմամբ: Ետնաբեմի թեմատիկ ձևավորման ապահովում՝ ՊՎՔ նյութերի տպագրությամբ: Մասնակիցներին անհրաժեշտ է ապահովել տաք ըմպելիքներով, քաղցրավենիքով: Անհրաժեշտ է ապահովել ֆոտո և տեսանկարահանում: Միջոցառումը հանրահռչակելու նպատակով անհրաժեշտ է պատրաստել թվով 1 անիմացիոն հոլովակ՝ 20,30,40վ տեւողությամբ աղապտացիաներով: Միջոցառման կազմակերպման հիմքում անհրաժեշտ է ապահովել բեմադրող ռեժիսորի, երկրորդ ռեժիսորի, ռեժիսորի 3 օգնականների, ռեկվիզիտորի, թվով 4 ադմինիստրատիվ անձնակազմի, նկարազարդողի, ինչպես նաև նախագծի մենեջերի մասնակցություն, որոնց թեկնածությունները անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Միջոցառումը պատշաճ մակարդակով կազմակերպելու, ինչպես նաև անձնակազմի անդամների միջեւ կապի ապահովման նպատակով անհրաժեշտ է ապահովել համապատասխան քանակի ռացիաներ: Տարեմուտի գիշերը՝ ս.թ. դեկտեմբերի 31-ին, Հանրապետության հրապարակում անհրաժեշտ է կազմակերպել միջազգային սիրված երաժիշտ եւ երգահան Գորան Բրեգովիչի և իր նվագախմբի կամ այլ համարժեք այլ արտիստի մասնակցությամբ շուրջ 1 ժամ 20 րոպե տևողությամբ համերգ: Անհրաժեշտ է ապահովել արտիստի, նվագախմբի եւ ուղեկցող անձնակազմի ժամանում Հայաստան դեկտեմբերի 30-ին եւ մեկնում հունվարի 1-ին: Ընդհանուր առմամբ 11 հոգու ժամանում, որոնցից 2 ավիատոմսը՝ բիզնես դասի: Բոլոր անձանց համար ապահովել կեցություն 5 աստղանի հյուրանոցում՝					

		նախաճաշի ներառմամբ, ինչպես նաեւ օրեկան առնվազն 2 անգամ սնունդի ապահովմամբ՝ ճաշ եւ ընթրիք: Ընդհանուր առմամբ՝ անհրաժեշտ է ապահովել լյուքս, կիսալյուքս և 9 մեկտեղանոց հյուրանոցային համար: Հայաստանում գտնվելու ողջ ընթացքում բոլոր Երևան ժամանած հյուրերին/արտիստներին և ուղեկցող կազմին ապահովել մշտապես կցված փոխադրամիջոցներով, ապահովել արտիստների հոնորարի վճարում: Արտիստների համար անհրաժեշտ է ապահովել հետնաբեմ՝ անհրաժեշտ բոլոր բաղադրիչների ապահովմամբ: Համերգի մեկնարկից առաջ անհրաժեշտ է ապահովել ՀՀ վարչապետի շնորհավորական մաղթանքի հոման համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները, ինչպես նաև նկարահանել տեսանյութ՝ Հանրապետության Հրապարակ վարչապետի մուտքի նկարահանմամբ: Անհրաժեշտ է ապահովել դի ջեյի մասնակցությունը միջոցառմանը: Անհրաժեշտ է ապահովել համերգի ուղիղ հեռարձակման համար անհրաժեշտ բաղադրիչներով: Միջոցառումը հանրահռչակելու նպատակով անհրաժեշտ է պատրաստել թվով 1 անիմացիոն հոլովակ՝ 20,30,40վ տևողությամբ ադապտացիաներով: Ս/թ. հունվարի 5-ին ապահովել Սուրբ Ծննդյան մանկական համերգ Հանրապետության Հրապարակում՝ մանկական խմբերի եւ երգիչների մասնակցությամբ: Համերգի համար պատրաստել ետնաբեմ՝ բոլոր մասնակիցների հարմարավետության ապահովման նպատակով և բոլոր անհրաժեշտ բաղադրիչներով: Միջոցառումը հանրահռչակելու նպատակով անհրաժեշտ է պատրաստել թվով 1 անիմացիոն հոլովակ՝ 20,30,40վ տևողությամբ ադապտացիաներով: Ապահովել 3 անձից բաղկացած ադմինիստրատիվ անձնակազմ: Տոնական միջոցառումների շրջանակում Երեւանի 2750-ամյակին նվիրված շատրվանների պուրակում՝ Սուրբ Ծննդյան տոնավաճառի տարածքում տոնական միջավայրի ապահովման նպատակով՝ յուրաքանչյուր շաբաթ ապահովել որևէ հայտնի բենդի մասնակցությամբ համերգ՝ առնվազն 45ր տևողությամբ («Միքայել Ոսկանյան և ընկերներ, «Նեմրա», Սրբուկն իր նվագախմբով, «Կարինե Առուստամյան և The Band»,ինչպես նաև «Թմբաթա» կամ այլ համարժեք այլ բենդի մասնակցությամբ): Բենդերի ցանկը և երգացանկը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Սուրբ Ծննդյան տոնավաճառի տարածքում 15 օր շարունակ (հստակ օրերը համաձայնեցնել պատվիրատուի հետ) անհրաժեշտ է նաև ապահովել մանկական թեմատիկ անիմացիոն ծրագիր՝ յուրաքանչյուր օր առնվազն 1 ժամ տևողությամբ: Ծրագրին անհրաժեշտ է ապահովել առնվազն 5 և առավելագույնը 10 կերպարների մասնակցություն՝ Ամանորի թեմատիկ զգեստավորմամբ: Անհրաժեշտ է ստեղծել պահանջվող կերպարային և համապատասխան քանակի հագուստները:					

		Տոնավաճառում յուրաքանչյուր երեկո ապահովել դի ջեյի նվագակցություն: Տոնավաճառի բոլոր տնակների էլեկտրականության ապահովման և այլ տեխնիկական հարցերի լուծման համար անհրաժեշտ է ապահովել առնվազն 1 էլեկտրիկի ներկայություն, ինչպես նաեւ 5 հոգուց բաղկացած ադմինիստրատիվ անձնակազմ՝ բոլոր կոորդինացիոն և կազմակերպչական աշխատանքների իրականացման նպատակով: Ս/թ. դեկտեմբերի 21-ին կայանալիք համերգին և դեկտեմբերի 31-ին ժամը 00:00-ին ապահովել հրավառություն՝ համապատասխանաբար 2 և 3 բոպե տևողությամբ՝ ապահովելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր անվտանգության նորմերը:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Սասնա Ծռեր փ, 2-198.
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

Վ. Պողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ ՍՊԸ «ՖԱԿՏՈՐԻ ՓՐՈԴԱՔՇՆ»
00167818
FACTORY production
R.A. c. YEREVAN
"FACTORY PRODUCTION" LLC. RA.c.EREVAN ООО "ФАКТОРИ ПРОДАКШН"

Հավելված N 2
«29» նոյեմբեր 2019թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	***Ծառայության անվանումը***	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	***Ընդամենը***
1.	79951110/657	«Ամանոր 2020» Ամանորյա տոներին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցում	137 868 720	137 868 720	***137 868 720***

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Սասնա Ծռեր փ, 2-198.
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

Վ. Պողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ ՍՊԸ «ՖԱԿՏՈՐԻ ՓՐՈԴԱՔՇՆ» 00167818
FACTORY production
RA, c. YEREVAN "FACTORY PRODUCTION" LLC. РА,г.ЕРЕВАН ООО "ФАКТОРИ ПРОДАКШН"

Հավելված 3
«29» նոյեմբեր 2019թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» նոյեմբեր 2019թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն